EASTERN PARTNERSHIP
Civil Society Forum

2018 թ. Մարտի 12, Բրյուսել

Արևելյան Գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի ուղերձը Արևելյան Գործընկերության նոր ճարտարապետության ներդրման մեկնարկի միջոցառմանը

Արևելյան Գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումը ուրախ է կիսելու իր մտահաղացումները և ներկայացնելու իր պարտավորությունները որպես քաղաքացիական հասարակություն: Մենք հավատում ենք, որ Արևելյան Գործընկերության քաղաքականությունը տրամադրում է ԵՄ-ի իր Արևելյան հարևանների հետ հարաբերությունների անբաժանելի շրջանակ:

Մենք պատրաստակամ ենք մասնակցելու ԱլԳ-ի նոր ճարտարապետության ներդրմանը և հավատում ենք, որ ԱլԳ ՔՀՖ-ի մասնակցությունը պանելի բոլոր հանդիպումներին և քննարկումներին մեծապես կնպաստի ընթացքին: Քաղաքացիական հասարակության ստաբիլ և երկարաժամկետ ներգրավվածությունն ապահովելու համար, որտեղ քաղաքացիական հասարակության փորձագետները կարող են կիսել իրենք քաղաքականության խորհուրդը, ինչպես նաև ունենալ ազդեցություն, վեր է դասվում ստանդարտ քննարկումների գործընթացից:

Սա Քաղաքացիական հասարակության ֆորումի ներգրավվածության հավելյալ արժեքն է: Մենք մեր դերը տեսնում ենք քաղաքականության պլանավորման, զարգացման և մոնիթորինգի գործընթացում որպես հավասար գործընկեր, ինչպես նաև վերջինիս իրականացումը 2020 թվականի Համագործակցային առաջնահերթությունների շրջանակում:

Քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը կարևոր է կառավարություններին հաշվետվողական պահելու, ինչպես նաև պաշտպանելու մարդու իրավունքները, թափանցիկությունը և ժողովրդավար կառավարումը:

ԱլԳ ՔՀՖ արդեն սկսել է հարմարվել ԱլԳ գագաթնաժողովի նորացված կառուցվածքին և մենք պատրաստ ենք հետևել այս ճանապարհին:

Պետք է հավելել, որ 2020 թվականի Համագործակցային առաջնահերթությունների օրակարգի բարեփոխումները կարող են աշխատել միայն այն դեպքում, երբ դրանք օժանդակվեն ԱլԳ երկրների քաղաքական առաջնորդության մասով ժողովրդավար փոփոխությամբ և եթե ԵՄ անդամ երկրները և հաստատությունները հաստատակամորեն հետևողական լինեն նման փոփոխություն հարցում:

Երեք անդամ երկրներում կան որոշակի դրական զարգացումներ, որոնք արդեն իրականացնում են Ասոցոցման Համաձայնագրերը համապատասխան կետերը, սակայն տարածաշրջանում կան նաև մի շարք մարտահրավերներ:

Ադրբեջան

Ադրբեջանական ծագումով Հոյանդիայի քաղաքացի Ֆիկրետ Հուսեյնլին իրավունքները խախտվում են վերջինիս Ադրբեջանին արտահանձնելու վտնագով պայմանավորված:
Հետևելով Ավղան Մուխտրալի մտահոգիչ դեպքի զարգացմանը, Ադրբեջանի իշխանությունները պնդում են, որ պրն. Հուսեյնլին խարդախություն է արել և անօրինական ձևով անցել է միջազգային սահմանները: Սա համարվում է Ուկրաինայի իշխանությունների իրավունքի գերակայությունը ստուգող փորձարկում: Եթե նրանք թույլատրում են այլազգի գործակալների կողմից աջակցություն ստացած անօրինական խմբավորումներին միջամտել իրենց օրինական գործընթացներին՝ նրանց վստահելիությունը խիստ կվնասվի:
Կոչ ենք անում իշախանություններին ձեռնարկել անհրաժեշտ բոլոր իրավական ընթացակարգերն և երաշխավորել պարոն Հուսեյնլի իրավունքները պաշտպանությունը, ինչպես նաև ազատությունը:

Հայաստան

Հայաստանում Եվրոպական Միությունը պետք է խթանի քաղաքացիական հասարակության կառուցակարգային ներգրավվումը Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր ճանապարհային քարտեզի նախապատրաստական և իրականացման գործընթացներին: Համաձայնագրով նախատեսված քաղաքացիական հասարակության երկկողմ հարթակի ձևավորումը պետք է լինի հիմնված լինի ներառկան սկզբունքի և գործող եվրոպամետ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հենքի վրա, ինչպիսին է օրինակ ԱլԳ ՔՀՖ-ի Հայաստանի ազգային պլատֆորմը: Վերջերս մշակված «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծի խախտում է թափանցիկության և հանրային

հաշվետվողականության սկզբունքները և սահմանում է, որ Կառավարության նիստերը պետք է լինեն դռնփակ այն օրվանից, երբ արդեն ընտրված նախագահը կսկսի իրականացնել իրեն վերապահված գործառույթները:

Դատական համակարգի, դատախազության և հետախուզական մարմինների անկախության սահմանափակումը, երբ բոլոր որոշումները և իշխանությունը կենտրոնացված են իշխող կուսակցության շուրջ բավականին մտահոգիչ են:

Վերջապես, քաղաքական հետապնդումները և պատիժները դեռևս համարվում են Հայաստանի իրականությունը, ինչպես օրինակ Անդրեաս Ղուկասյանի դեպքն է: Այս գործը Հայաստանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուղարկված առաջին գանգատն է, որը ներկայացվել է Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 18-րդ հոդվածի խախտումներով (այն է՝ իրավունքների և ազատությունների սահմանափակում այլ հիմքով, քան նախատեսված են Կոնվենցիայով):

<u>Բելառուս</u>

Բելառուսում անհրաժեշտ են հատուկ ցուցիչներ՝ ԵՄ-Բելառուս երկկողմ օրակարգի առաջընթացը չափելու համար, մինչդեռ անկախ քաղաքացիական հասարակությունը պետք է ունենա ամբողջական և հավասար մասնակցություն Համակարգող խմբի հանդիպումներին, որտեղ պետք է իրականացվի համագործակցության միջանկյալ արդյունքների պահեստավորում:

Քաղաքացիական հասարակության և Արտաքին գործերի նախարարության, ինչպես նաև այլ նախարարությունների միջև ուղիղ խորհրդակցությունները կտրամադրեն անհրաժեշտ գնահատողական հանդիպումներ: Բելառուսում մեր ազգային պլատֆորմը կարող է ունենալ ընդլայնված ներկայացուցչություն(4-5 ներկայացուցիչ)՝ թեմատիկ հարցերի շուրջ փորձագիտական ներգրավումն ապահովելու համար:

<u>Վրաստան</u>

Վրաստանում ժողովրդավարական ինստիտուտները համախմբվել են, ինչպես նաև ընդունվել են խտրականության դեմ ուղղված, մարդու իրավունքներին առնչվող օրենքներ: Այնուամենայնիվ, դատական համակարգի անակախությանն առնչվող հարցերի շրջանակը շարունակում է մտահոգել:

Չնայած, դատական նիստերի թափանցիկությանն ուղղված մի շարք փոփոխություններ տեղի ունեցել են, Վրաստանը դեռևս չունի իրավապահների կողմից խախտումների հետաքննության մեխանիզմ:

Աֆգան Մուխթարլիի գործում Վրաստանի ոստիկանության մասնակցությունը դեռևս պետք է հետաքննվի, ինչպես ասվում է Վերստուգող Հանձնաժողովի՝ Վրասատնի վարչապետին ուղղված նամակում:
Վրաստանի մեդիա դաշտը որակվել է որպես "մասամբ ազատ" կան մտահոգություններ լրատվամիջոցների բազմակարծության առնչությամբ, մասնավորապես Ռուստավելի 2 հեռուստաալիքի առնչությամբ:
Մենք դատապարտեցինք այն խախտումը, որը Վրաստանի քաղաքացի Տատունաշվիլիին մահվան հասցրեց և կոչ արեցինք Ռուսատանին և Հարավային Օսետիային վերջինիս մարմինը հանձնել իր ընտանիքին, որպեսզի Թբիլիսիի կողմից կառավարվող տարածքում լարվածությունը թուլացնա: Սրան անմիջապես հետևեց վերջինիս արձակումը և խաղաղ հանձնումը ընտանիքին: Վրաստանի համար չափազանց կարևոր է եվրոպական հեռանկարը:
2020 թվականի Համագործակցային առաջնահերթությունները, ինչպես նաև քաղաքականության այլ շրջանակներ կարևոր գործիքներ են, որոնք պետք է արդյունավետորեն իրացվեն ԵՄ անդամակցության ավելի մոտ բերելու համար:

<u>Մոլդովա</u>

Մոլդովան հետ է մնում Խորը եւ համապարփակ ազատ առեւտրի գոտու առնչությամբ ստորագրված համաձայնագրի իրականացումից (գնահատվում է մոտ 66%):
Համապարփակ մոնիթորինգի վրա հիմնված քաղաքացիական հասարակության գնահատականները նույնիսկ ավելի ցածր են: Հակակոռուպցիոն և արդարադատության բարեփախումները դեռևս շարունակում են մնալ կիսատ: Մեդիա դաշտը շարունակում է մնալ խնդիրներով լի՝ մեդիա ազատության հետագա վատթարացման հեռանկարով:
Քաղաքացիական հասարակության վրա հարձակումներն աճել են: 2017 թվականին Կառավարությունը փորձ արեց սահմանել նոր օրինագիծ՝ կարգավորելով քաղաքացիական հասարակութան ոլորտը, որը կտրուկ ազդեցություն ունեցավ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հաշվետվության պարտականության վրա: Եվրոպական Միության և անդամ երկրների համատեղ հակազդեցությունը կանխեց օրենսդրության նյութականացումը: 2018

թվականը Մոլդովայի համար ընտրության տարի է, և այն երկրի ապագայի համար վճռական տարի է: Մոլդովայի ընտրական օրենսգրքի վերաբերյալ Վենետիկի Հանձնաժողովի պատասխանը ցնցեց երկրի ժողովրդավարացման, ինչպես նաև երկրի եվրոպական հեռանկարի ակնկալիքները:

Առաջիկա տարիներին քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կարևոր դերակատարություն կունենան երկրում՝ վերջապես խթանելով բարեփոխումների աստիճանական վերադարձը:

<u>Ուկրաինա</u>

Ուկրաինայի կառավարությունը, քաղաքացիական հասարակության և Եվրոպայի Միության հետ համագործակցությամբ պետք է աշխատեն միասին երկրում մեդիա անկախությունը և ազատությունը ապահովելու համար: Սա կարևոր է նաև «օկուպացված» տարածքներում, որտեղ լրագրողները զրկված են գործունեության հնարավորությունից, սակայն համաձայն տեղական բարեփոխումների, ամուր և ազատ զանգվածային լրատվությունը կաջակցի բացահայտելու հասարակության տարբեր շերտերում առկա կոռուպցիոն երևույթները: ԱլԳ ՔՀՖ Ուկրաինայում բարեփոխումների համախմբման և տարածման գործում կունենա կարևոր դերակատարություն՝ համակարգելով և միավորելով քաղաքացիական հասարակության, Ուկրաինայի կառավարության և Եվրոպայի Միության ջանքերը: Հանրային կառավարման, կոռուպցիայի դեմ պայքարի և դատական համակարգի բարեփոխումներում մենք տեսնում ենք նոր շարժիչ ուժ, սակայն մենք դեռ բավականին երկար ճանապարհ ունենք անցնելու:

ՔԿՀ-ները պետք է հավասարապես մասնակցեն քաղաքականությունների մշակման գործընթացներին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տրամադրեն փորձագիտական աջակցություն և ուղղորդում:

ԵՄ պետք է ամրապնդի և ընդլայնի Ուկրաինայի հետ իր կապերը՝ տրամադրելով օգուտ, որը համակցված կլինի ամուր պայմանականությամբ, ինչպիսին էր օրինակ վիզայի ազատականացումը: Քաղաքացիական հասարակության և Եվրոպայի Միության կողմից տրամադրվող ամուր համագործակցությամբ և նպատակաուղղված ջանքերով, ինչպես նաև Ուկրաինայի կառավարության կողմից քաղաքական ջանքերով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն անկախ և երկար սպասված դատարանների ստեղծումը շատ հեռու չէ, որը երկրում բեկումնային փուլ կբերի:

EASTERN PARTNERSHIP
Civil Society Forum

Մինչև 2020 թվական Համագործակցային առաջնահերթությունների ուղենիշը, մեր միասնական պատախանատվությունն է կյանքի կոչել այս օրակարգը՝ Եվրոպական Միության կարևորագույն առաջնահերթություն ունեցող այս տարածաշրջանում:

Ներկայացված՝ Հայկուհի Հարությունյանի կողմից, Արևելյան Գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի վերստուգող հանձնաժողովի, 1-ին աշխատանքային խմբի համակարգող